



FOREST SUMMIT

Global Action and Armenia

Co-Presented by

AUA

ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT

ARMENIA
TREEPROJECT

Շրջակա միջավայրի փոխնախարար. «Գազաթափողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» միջոցառումը «կառուցողական քայլ» է Հայաստանի անտառների համար

Հոկտեմբերին կայանալիք «Գազաթափողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» միջոցառմանը զուգահեռ անտառապատման ու վերականգնման մասնագետներն ու քաղաքական գործիչները շարունակում են ընդգծել համաժողովի և դրա անցկացման պահի ու վայրի կարևորությունը:

Միջոցառումը, որը տեղի կունենա ս.թ. հոկտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 23-ը, Երևանում կհամախմբի անտառվերականգնման ոլորտում առաջատար մասնագետների՝ գիտելիքների փոխանակման, երկխոսության և կապերի հաստատման համար:

Միջոցառման գլխավոր բանախոսն է լինելու անտառագիտության ոլորտում հետազոտական և կրթական գործունեություն ծավալող՝ աշխարհի առաջատար հաստատություններից մեկի՝ Օրեգոնի պետական համալսարանի Անտառագիտության քոլեջի դեկան, պրոֆեսոր Էնթոնի Ս. Դեյվիսը:

Բացի Պրոֆ. Դեյվիսից, միջոցառմանը մասնակցելու են Վուդս Հոլ հետազոտական կենտրոնի բնապահպանության տնտեսագետ դոկտոր Գլեն Բուշը, Իսրայելի ամենամեծ բնապահպանական կազմակերպության՝ KKL-JNF ազգային հիմնադրամի անտառների ստորաբաժանման տնօրեն դոկտոր Օմրի Բոնեդը, 2004թ.-ին Քենիայում անտառապատման և հասարակական ակտիվության համար խաղաղության Նոբելյան մրցանակ ստացած միջազգային «Կանաչ գոտի» շարժման ծրագրերի պատասխանատու Դեյվիդ Մաթենջեն, «Լիբանանի անտառվերականգնման նախաձեռնություն» կազմակերպության գործադիր տնօրեն դոկտոր Մայա Նեհմեն, ինչպես նաև ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Կանաչ կլիմայի հիմնադրամի Լատինական Ամերիկայի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով տարածաշրջանային խորհրդական տիկին Կարմեն Արգուելլոն և այլք:

ՀՀ Շրջակա միջավայրի փոխնախարար պարոն Վարդան Մելիքյանը ողջունել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից համատեղ իրականացվող «Գազաթափողով հանուն անտառների» անդրանիկ միջոցառումը: Նա հավելել է, որ միջազգային և տեղի կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված խոսնակների ցանկը տպավորիչ է: «Մենք ունենք հավակնոտ ազգային ծրագիր՝ կրկնապատկելու անտառածածկը մինչև 2050 թվականը, և այս միջոցառումը կառուցողական քայլ է՝ միավորելու տարբեր շահագրգիռ կողմերի և համագործակցելու անտառապատման և վերականգնման հարցերի շուրջ»:



FOREST SUMMIT

Global Action and Armenia

Co-Presented by

AUA ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT

ARMENIA
TREEPROJECT

Ամբողջ աշխարհում գիտնականները, քաղաքական գործիչները և քաղաքացիներն սկսել են դիտարկել կլիմայի փոփոխությունը՝ որպես 21-րդ դարի ամենակարևոր խնդիրներից մեկը, և այդ կոնտեքստում անտառների ընդլայնումը ճանաչվել է որպես այդ աղետը մեղմելու ամենաարդյունավետ ուղիներից մեկը:

Անտառներն օգնում են առանձնացնել ածխաթթու գազը, որը կլիմայի փոփոխության գործոններից է, ինչպես նաև ապահովում են էկոհամակարգի այլ արժեքավոր ծառայություններ՝ ներառյալ ջրերի մաքրումը, ինչպես նաև թռչունների և կենդանիների համար բնական միջավայրի ստեղծումը:

Հայաստանի Խոսրովի անտառ է վերադարձել Կովկասյան ընձառյուծը, ինչը կենսաբազմազանության պահպանման հաջողության պատմություն է: Միևնույն ժամանակ, Հայաստանը հանձն է առել կրկնապատկել իր անտառածածկը մինչև 2050 թվականը՝ որպես Բոննի մարտահրավերի և Կլիմայի փոփոխության վերաբերյալ Փարիզի համաձայնագրի կատարման իր մաս: Անտառների մասին գազաթնաժողովը կանդորադառնա այս խնդիրներից շատերին:

Բացի տաղանդավոր բանախոսների և նիստի մասնակիցների զաղափարներից և ելույթներից՝ գազաթնաժողովի ընթացքում լինելու են նաև դաշտային այցելություններ դեպի Հայաստանի ծառատնկման վայրեր, ինչպես նաև գեղատեսիլ Դիլիջանի ազգային պարկը: Ըստ էության՝ գազաթնաժողովը խթանելու է անտառների պահպանման և վերականգնմանն ուղղվող քննարկումները և համագործակցությունը, ինչն այդքան անհրաժեշտ է թե՛ Հայաստանին, և թե՛ ամբողջ աշխարհին:

Գազաթնաժողովի, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի կամ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի մասին ավելին իմանալու համար այցելեք <http://forestsummit.am>:

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասին

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը (ՅԿԲ) Հայաստանի ամերիկյան համալսարանի հետազոտական կենտրոն է: ՀԱՀ ՅԿԲ-ն խրախուսում է բնական միջավայրի պահպանությունն ու վերականգնումը՝ հետազոտության, կրթության և հասարակության հետ կապերի միջոցով: ՀԱՀ ՅԿԲ-ի աշխատանքային ուղղվածություններն են բնական պաշարների կայուն կառավարումը, կենսաբազմազանությունը, ստեղծված շրջակա միջավայրի կանաչապատումը, մաքուր էներգիան և էներգաարդյունավետությունը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներն ու շրջակա միջավայրը:

«Էյ Թի Փի»-ի մասին

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ տեղակայված Ուոբուրն և Երևան քաղաքներում: Մենք իրականացնում ենք կենսական նշանակություն ունեցող բնապահպանական ծրագրեր՝ Հայաստանի քաղաքներում և գյուղերում: 1994թ.-ից «Էյ Թի Փի»-ն հսկայական աշխատանք է իրականացրել անապատացման դեմ պայքարում՝ գործելով կենսաբազմազան, սակայն վտանգված Կովկասյան տարածաշրջանում: Ծրագրի շրջանակներում տնկվել և վերականգնվել են ավելի քան 5700000 ծառեր և ստեղծվել բազմաթիվ աշխատատեղեր: «Էյ Թի Փի»-ն նպաստում է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ներգրավելով միջոցներ անտառների վերականգնումը ֆինանսավորելու համար: Մեր կողմից աճեցված և տնկված ծառերը կենսական նշանակություն ունեն. նրանք մարդկանց ապահովում են սննդով, փայտով, բնապահպանական բարիքներով և տնտեսության աճի համար անհրաժեշտ հնարավորություններով: «Էյ Թի Փի»-ն ունի ավելի քան 80 աշխատակից Հայաստանում: Երևանյան մասնաճյուղն ապահովված է չորս ժամանակակից



FOREST SUMMIT

Global Action and Armenia

Co-Presented by

AUA ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT

ARMENIA
TREEPROJECT

տնկարաններով և բնապահպանական կրթության համար նախատեսված երկու կենտրոններով: Երևանյան մասնաճյուղը համագործակցում է համայնքային բնակչության հետ՝ միկրոձեռնարկությունների (տնամերձ տնկարաններ) ստեղծման միջոցով, հիմնում է հանրային օգտագործման կանաչ գոտիներ, անտառապատման միջոցով վերականգնում է էռոզացված անտառային հողեր: Նոր անտառներ տնկելու նպատակով հիմնադրամը ժամանակավոր աշխատատեղեր է ստեղծում հարյուրավոր մարդկանց համար: Ավելին իմանալու համար այցելեք՝ www.armeniatree.org: